

Մամլո հաղորդագրություն

16 ապրիլի, 2013 թ.

Վրաստանում գործող հայկական աշխարհիկ ու կրոնական կազմակերպությունները 1915-23թթ. Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջով դիմեցին Վրաստանի խորհրդարանին:

«Մենք, ներքոստորագրյալ Վրաստանի հայ համայնքի աշխարհիկ եւ կրոնական կազմակերպություններս, հանուն արդարության եւ ժողովրդավարական արժեքների նվիրվածության, կոչ ենք անում, միանալ աշխարհի քաղաքակիրթ հասարակության նախաձեռնություններին եւ Վրաստանի խորհրդարանում կազմակերպել քննարկում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի վերաբերյալ» – ասվում է դիմումում:

«1915-1923 թթ. վերոնշյալ ծրագրի հետեւանքով հայ ժողովուրդը կորցրեց ավելի քան 2 միլիոն հայրենակից եւ իր հայրենիքի մեծ մասը: 1915-1923թթ. հայ ժողովրդի դեմ կատարված հանցագործությունը որակում են որպէս ցեղասպանություն, որը մարդկության դեմ կատարված հանցագործություն է: Դրա մասին են վկայում իրավական փաստաթղթերը, որոնք 1915թ. մայիսին ընդունեցին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը: Հայ ազգի իրավունքների վերականգնման հարցը 1919թ. քննարկվել է Փարիզի խաղաղության կոնֆերանսի ընթացքում: Հայոց ցեղասպանությունն ապացուցող փաստ է նաեւ 1920թ. ստորագրված Սեւրի պայմանագիրը: Հայոց ցեղասպանության նշաններ լիովին համընկնում են 1943թ. հրեական ծագումով լեհ փաստաբան – Ռաֆայել Լեմկինի մշակած եւ 1948թ. ՄԱԿ – ի Գերագույն Ասամբլեայի ընդունած բանաձեւի հետ, ըստ որի ընդունվեց «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ պատժելու մասին Կոնվենցիան»: Հարկ է նշել, որ 1993թ. հոկտեմբերին Վրաստանը վավերացրեց այս կոնվենցիան». – ասվում է նամակում, որը ստորագրում են. «Վրաստանի Հայ համայնք»-ը, Վրաստանի Հայ Առաքելական Ուղղափառ եկեղեցու «Հայարտուն» կրթա-մշակութային եւ երիտասարդական կենտրոնը, «Վրաստանի Հայերի Ազգային Կոնգրես»-ը, «Թբիլիսյան Հայերի Վեհաժողիվ»-ը, Վրաստանի «Վերնատուն» հայ գրողների միությունը, «Վրաստանի Հայ Համայնք»- ի ուսանողական միությունը, «Վրաստանի Հայ Համայնք»-ի երիտասարդական միությունը, Վրաստանի հայ նկարիչների միությունը, Վրաստանի հայ մտավորականների միությունը, Վրաստանի հայ երաժիշտների միությունը:

Հարկ է նշել, որանցած տարիների ընթացքում Վրաստանի հայկական կազմակերպությունները Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջով

բազմիցս դիմել են Վրաստանի պառլամենտին ու կառավարությանը, սակայն նրանց պահանջը միջ օրս մնում է անպատասխան:

Ներկայումս Հայոց ցեղասպանությունը ճանաչել է աշխարհի ավելի քան 20 պետություն, ինչպես նաև բազմաթիվ միջազգային կազմակերպություններ, այդ թվում՝ Եվրոպական պառլամենտն եւ Եվրոխորհուրդը:

Այս պահին Հայոց ցեղասպանության հարցի քննարկման եւ ճանաչման գործընթացն իրականացվում է մի շարք երկրներում (ԱՄՆ, Բուլղարիա, Իսպանիա, Իսրայել):

Վիրահայոց Թեմի մամլո դիվան

Արմազի փող. 18, 0103, Վրաստան, Թբիլիսի

Հեռ.: +995322546411

Բջջ.: +995593397170

Ֆաքս +995322751790

Էլ-փոստ՝ contact@armenianchurch.ge